

ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ. Ֆինանսների մինիստրի ընկեր (==ТО-варыамъ) նշանակած է գալտնի խորհրդական Վ. Ի. Կովալենկոյ, իբրև առևտրի և արդիւնաբերութեան գործերի վարիչ, Մինչև այժմ Կովալենկոյն վերադեսուչ էր առևտրի և մանուֆաքտուրի բաժնի, ֆինանսների մինիստրութեան մէջ:

— Մամուլի գործերի Գլխաւոր կառավարութեան պետի պաշտօնակատար է նշանակւած իշխան Շախաւսկոյ, իսկական պետական խորհրդականի ասորիճանով, նա մինչև այժմ նոյն Գլխաւոր կառավարութեան խորհրդի անդամ էր:

— Արտաքին գործերի մինիստր Կոմս Մուրաւեւովի մահւան հետեանքով՝ ժամանակաւորապէս արտաքին գործերի կառավարիչ նշանակւած է հանգուցեալի օգնական Կոմս Լաւրգորֆ:

ՖԻՆԼԱՆԴԻԱ:

Ֆինլանդական թերթերը հաշորդում են, որ վճուած է ռուսաց լեզուն մոցնել ֆինլանդական սենատի և տեղական գլխաւոր վարչութիւնների տնտեսական գործաւարութեան մէջ, Հոկտ. 1-ից բոլոր առաջարկութիւնները Բարձրագոյն անւան, սենատի տնտեսական բաժնից, գրեւոր են միայն ռուսերէն, աւելիսները մինչև այժմ գրուած էին շեդերէն՝ ռուսերէն թարգմանութիւնը կցելով հետը, 1:03 թ-ից բոլոր գլխաւոր կառավարութիւնների սենատ շրկելի թղթերը գրեւոր են ռուսերէն, իսկ 1905 թ-ից ռուսաց լեզուն շառնալու է պաշտօնական՝ սենատի տնտեսական բաժնում: Պետական-քարտուղարի գործաւարութեան մէջ ռուսերէնը մոցւում է անպապաշտ սենատի շարական բաժնի և տեղական շարտառների գործաւարութեան մէջ պահպանւում է շեդերէնը և ֆիններէնը:

— Կալսերական հրամանով վերացրած է Ֆինլանդիայում ժողովներ կազմելու ազատութիւնը և այդ մասին հրատարակւած են ժամանակաւոր կանոններ, որոնք նման են կալսերութեան միւս մասերի մէջ գործող կանոններին:

ԱՔՍՈՐԸ ԹՈՒՄԱՅՈՒՄ ՎԵՐԱՅՐԱԾ: Հրադարակամ է Բարձրագույն հրաման, որով աքսորը վերացում է և ժամանակաւոր կանոններ են հաստատուում աքսորը ուրիշ պատիժներով փոխարինելու համար: Աքսորը չէպի Սիրիւր և Անդրկովկաս, նոյնպէս և Սիրիւր, և, բացի Սիրիւրից, հեռաւոր նահանգները բնակելու համար՝ վերացւում է, պահպանելով մշտական աքսորը օրէնքում առանձնապէս մատնացուց առած լանցանքների համար: 2) Գիւղական և մէջլանների հասարակութիւնների իրաւունքը՝ որոշումներ կապցնել շադաստանական վճիռներով պատիժը կրած իրենց անդամներին ընդունելու կամ չընդունելու մասին՝ վերացւում է: Նոյնպէս մէջլանների հասարակութիւններից խլուում է իրաւունք՝ ներկայացնելու կառավարութեան կարգադրութեանը իրենց այն անդամներին, որոնք արադաւոր վարք ունին:

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՄԱՍՈՒԼ:

«Новое Обозрѣніе» (=Նովոե Արագրենիե) Թիֆլիսի ռուսական օրաթերթը, որի հրադարակութիւնը անցեալ տարւոյ հոկտեմբերից կառավարութեան կարգադրութեամբ, շաշարեցրած էր ութ ամսով, վերստին պիտի սկսի հրադարակել ներկայ տարւոյ օգոստոսի 18-ից, համաձայն թերթի խմբագրութեան մեզ շրկած մի ծանուցման:

ԲՈՇԿԱԿԱՆ ԹԵՐԹԻԿՆԵՐԸ, Պիւրոգովեան բժշկական ընկերութեան ձեռքով կազմած, հասկանալի լեզուով բաց և խիստ գիտական ճշգրտութեամբ, շարունակում է տպագրել Կովկասեան բժշկական ընկերութիւնը ռուսաց, հայոց և վրացոց ու, կարծեօք, նաև թուրք լեզուներով: (Տես այդ մասին Մուրճ № 4, լուրեր): Որպէս մեզ հաղորդում են, այդ գործին նպաստելու համար մամուլի օրգաններից ընկերութեանը իր ծառայութիւններն է առաջարկել Տարազի խմբագրութիւնը, որը հարազդում տպագրում է ընկերութեան մասնաժողովից առաջարկւած այդ թերթիկները հայերէն թարգմանութեամբ: Շարաթաթերթի № 25-ի մէջ տպւած է այդ թերթիկներից երկրորդը—«Ինչպէս պաշտպանել ծաղիկ հիւանդութիւնից», փոխադրութեամբ բժշկ. Ա. Բաբաեանի: Ջերմագին լանձնարարում ենք ամեն ընթերցողի, մանաւանդ գիւղական տանուտէրնային, քահանաներին, զրազէր ծնողներին կարշալ այդ առողջապահական հրահանգները և ունենալ իրենց մօտ այդ թերթիկները, որ բժշկ. ընկերութիւնը ամեն տեղ գրում է ձրիաբար:

ՆԿԵՂՆՑԱԿԱՆ ԿԱԼԻԱՇՆԵՐԻ ՄԱՍԻՆ: Վեհ կաթողիկոսը, ս. Էջմիածնի գահը բարձրանալու օրից, որամաշրութիւններ ցուց տուց Էջմիածնապատկան կալածների կառավարութիւնը փոխելու, աւելի արդիւնաւոր կացուցանելու համար այդ հոշերը: Նորին Վեհափառու-

թեան կողմից՝ ամսագրիս խմբագրին արած շիտումին՝ պարտւոյ ունեցանք մարտնչուց լինելու մեր երկրի զիւլադնորես պր. Թա. մամեանի վրայ, որը և հրաւիրեց ս. Էջմիածին աւր. մասին ծրագիր ներկայացնելու, բայց սլաշրոն չը լաճնեց նորան. Ապա փորձեր եղան Էջմիածնի ազարակը և ալգինելը մասնագէտ զիւլադնորեսի կառավարութեան և տնտեսութեանը լանձնելու, և աւր. սլաշրոնով ժամանակաւորապէս ծառայեց, օրինակ, Գեղմանիա աւարտած զիւլադնորես սլ. Յովհ. Շահպաղեանը, բայց Էջմիածնում հնուց արմատացած կարգերը խոչնդոր եղան լիչեալ անձի գործունէութեանը, և նա սորիպեւած եղաւ թողնել իր պաշտօնը, և խնդիրը մինչև օրս էլ մնում է խնդիր. Վերջերս Էջմիածնում շարժեալ խնդիր է լարուցւած Էջմիածնապատկան կալւածները շահագործելու հին եղանակը փոխելու մասին. Մենք արդէն մի ուրիշ անգամ՝ Հելլենէնդորֆի մօտ եղած եկեղեցապատկան մի կործր հողի առիթով, լայտնել ենք մեր կարծիքը որ եկեղեցապատկան մեծ կործր հողերը շահեցնելու ժամանակակից պահանջին ու ճերմակիս ալ պալմաններին ամենից լաւ բաւարարութիւն տաւ կ'լինէր Էջմիածինը, եթէ նա աւր. հողերը երկարատեւ կ'պալի պալմանով տար զիւլացիների, չափաւոր կապալաւորմով. Տեղ-տեղ Էջմիածինը լաւ կ'անէր մի-մի կործր հող իրեն վերապահէր, սեփական տնտեսութեան համար, մասնագէտները լանձնելով նոցա, լարուել նպատակով օրինակելի տնտեսութիւն պահպանելով՝ զիւլադնորեսութեան օրինակներ տալ շրջակալ շիւլացիներին—օրինակելի վարուցանքս, ալգեգործութիւն, կաթնատնտեսութիւն և ալլն. իսկ ինչ վերաբերում է զիւլացիներին տալիք հողերին, աւր. պիտի աշխպէս կատարւի, որ կազմեն փոքրիկ զուղեր՝ 10—20—30 տներով ամեն մէկը, և Էջմիածինը իր վրայ առնէր նաև զիւլացիների համար աժնաղին բայց օրինակելի տներ կառուցանելը, ի հարկէ միայն սլգըներում, տները գինը տոկոսով ետ ստանալով զիւլացիներից 25 տարաւ ընթացքում, օրով տները ապս. կը մնան սեփականութիւն զիւլացիներին:

Ընշարձակ կալւածները, որպիսիք են խոթալ և Գանձատարները, հարկւր հազարաւոր շեսնադին տարածութեամբ, բոլորովին անխորհուրդ բան ենք համարում կառավարել իբրև մի ամբողջութիւն, իբրև մի կալւածք, թէկուզ աւր. կատարի մասնագէտ զիւլադնորեսի միջոցով. Եկեղեցին ամենեւին չպիտի ձգտի մեծ եկամուտներ ստանալու, ալլ նա պիտի ձգտի լաւապէս ծառայելու մողովրդին, շորա մէջ որոնելով և իր սեփական օգուտը. և զիւլացիներին տալով զիւլադնորէ հողեր—չափաւոր կապալաւորմով—Էջմիածինը նոյն իսկ աւելի էլ ապահոված կ'լինէր ամեն պատահարներից:

ԱԹԱԼԻՔԱԼԱԿԻ գաւառի արկածեալներին օգնող գլխաւոր կոմիտէն, որ գործում է Թիֆլիսի նահանգապետի նախագահութեամբ, հրապարակել է հաշիւ իր մօտ և Ախալքալաքի տեղական կոմիտէնում ստացւած բոլոր նւերներին, որ կատարուած են Դրամով և իրերով 19-ից յեկտ. 1899 թ. մինչև 20 ապրիլի ներկայ 1900 թ., Յամաձաշն ալի ցուցակ-բրոշիւրի (47 էջ) մինչև ալի օրը գլխաւոր կոմիտէն ստացել էր Դրամով 199.937 ռ. 66 կ., տեղական կոմիտէն 15.178 ռ. 43 կոպ., ընդամենը 215.116 ռ. 09 կոպ.: Ալի ցուցակի համաձայն ամենախոշոր գումարներ տւել են, Թագաւոր Կալսրը 50 հազար, Մեծ Իշխ. Միխայիլ Նիկողանիչի ընտանիքը 1 հազար, Մեծ Իշխ. Նիկողալ Միխայիլովիչ 500, Մեծ Իշխանուհի Նիկաւէտա Ֆէօդորովնայի հաճութեամբ Ռուսական Կարմիր Խաչի Մոսկւայի տիկնանց կոմիտէից 7.371 ռ., Մեծ Իշխանուհի Նիկաւէտա Ֆէօդորովնայի ներկայացրած Կոնստիկովից 1 հազար, Վեհ Կաթողիկոսից 1 հազար, կառավարչապետի կարգադրութեամբ 3 հազարի, Ալ. Մանթաշեան 5 հազար, Նրանդ. Բուշաշեան (Բաքու) 5 հազար, Նշբ. Միրզաեան ընկերութիւն 5 հազար, Ռուսաց Կարմիր Խաչի ընկ. 3 հազար, Նշբ. Միլեանների առևտ. տուն Մոսկւա 1806 ռ., Թիֆլ. Կարմիր Խաչի ընկ. 3 հազար, Թիֆլ. Առևտր. բանկ 3 հազար, Թիֆլիսի քա. վարկի ընկ. 1200, Հեղեհալները նւիրել են 1000-ական ռուբլի՝ Թիֆլ. ձիաքարչի անձնուն ընկ., Իբրահիմբեկովա խանուհի, Թիֆլ. ազնւակ. հոշալին բանկ, Ազովեան առևտր. բանկ, Նսալի Փիթոյեանի առևտր. տուն, Բաքու քաղ. ժողովարան, Պետերբուրգի հալոց և Մոսկւայի հալոց եկեղեցիների հոգաբարձութիւն, Թիֆլ. փոխադաձ վարկի ընկ., Հալոց կոնսիստորներից, Թեմական առաջնորդներից, չաջորդներից եկեղեցական գումարներից և կամ նոցա կատարած ժողովարարութիւնները, (Թիֆլիս, Մոսկւա, Ախալցիխա, Դերբէնդ, Սիֆերուպոլ) ստացւած է 9. 886 ռուբլի, չը հաշւած այն գումարները, որոնք առաջնորդները և չաջորդները շրկած են ալ և ալ խմբագրութիւնների (օրինակ Աստրախանից, Աոր-Նախիջևանից, մասամբ Մոսկուայից),

ԲԱԲԻԱՅ ՆԱԻԹԱԳՈՐԾՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՆԻՍՏԸ, որ կապցաւ մալխին, վճռեց բանւորների ապահովագրութեան խնդիրը այն մորքով, որ ամեն արդիւնաբերած նաւթից վերցնել փութալճար, որով կ'կազմւի հարկաւոր Դրամագլխը բանւորներին վարձատրելու համար Դժբախտութեան դէպքերում Ալի վճիռը սպասուում էր վաշուց (համեմատել Մուրճ 1899 թ. № 7—8, էջ 1088)։

ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳԻ 500-ամեակը, Տպագրութեան գորիչ Յոհան Գուտտենբերգի ծննդեան 500-ամեակը լրացաւ ներկայ լուծիսի 11-ին, որ և տօնեց զրական և տպագրական ընկերութիւնների կողմից ամենուրեք։

ԿՐԱԿՈՎԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ (լեհական) լոճեց իր գոյութեան 500-ամեակը փառաւոր հանդէսներով, որին մասնակից էր ամբողջ բաւաքը և շրջակաները, Բազմաթիւ պատգամաւորութիւններ ինչ եկեղ ալ երկիրներ ի համալսարաններից և ալլն, (կրակովը Գալիցիայումն է, Աստորիայում)։

ԳՐՈՒԶԻՆԵԱՆ ԳՐԵՆԱԳԷՐԵԱՆ ԳՆԴԻ 200-ԱՄԵԱԿԸ, Ներկայ լուսիսին Բէլլու-կիւշ (==Ալքուլա) աւանում լոճեց Գրուզինեան (==Վրաստանի) գրեհաշերտան գեներալ Կոռլեարեակուն գնդի 200-ամեակը, Գունդը իր սկիզբը առել է Պետրոս Մեծի ժամանակ, 1700 թ-ին, որը կոչեց «Աստորախանեան գունդ»։ Ապա Դորաճի միացեց Տոմսկեան գունդը, Զեչենիայում Նիխ-Մանսուրի Դէմ արշաւանքի ժամանակ կրած շնասների պատճառով, գունդը վերակազմեց չորս բաղաւրին ունեցող գնդի, որ նախ կոչեց «Կովկասեան հերակ գունդ», իսկ 1795 թ-ից «Կովկասեան գրեհաշերտան գունդ»։ Այդպէս վերակազմած գունդը իր առաջին 15 տարիները անցկացրեց Հիւս, Կովկասում, ուր լաւորնի Դաւաւ իր մասնակցութիւնով Բաղաւրիայի (Կուբանի վրայ) և Անապայի գործերի մէջ, հրամանատարութեամբ Գուրուվիչի, 1801 թ-ին գունդը տեղափոխեց Վրաստան իշխ, Յիցիանովի ժամանակ, հրամանատարութեամբ ենթգնդապետ Սիմոնովիչի, նա պաշտպանեց Քարթալինիան (բուն Վրաստան) լեզգիներից, խոնարհեցրեց Սանթիան, շտաբով վերցրեց Գանձակը և մասնակցեց Նրեանի պաշարմանը, ուր 15 լուսիսի, վճռողական ճակատամարտում, պարտից ամբողջ զօրքի Դէմ պաշտպանեց ռուսաց Դիրքի գլխաւոր կէտը—Քարաւան-Սարալը, և Սիմոնովիչը ապա նշանակեց գնդի շէֆ, Գունդը շնասակցեց 1805 թ-ի արշաւանքին (ուր հռչակեցին Կարեագինը, Կոռլեարեակուն և Լիսանեւիչը)։ Բայց լեւոր, Գուրուվիչ ու Տորմասով կառավարչապետների օրերով գունդը շարունակ կրակի մէջ էր, Կարաի շտաբումը, Արիաչայի լալթութիւնը, պարտութիւնները Ախալքալակի և Նրեանի պարիսպների ներքոյ, կռիւներ իմերեթիւում, որի քաղաքական անկախութեանը Դորանով վերջ դրեց (1810 թ.), Գունդը 1811-ին Քուրթալիսից վերադարձաւ Վրաստան, որի անունը սկսեց կրել աչդ ժամանակից ի վեր, և նորա շէֆ նշանակեց գնդապետ Պետր Ստեպ, Կոռլեարեակիլ—Ասկորանի, Շահ-Բուլալի և Մեւրիի հերոսը, Պարսիկները (Աբբաս-Միրզա) երկացել էին Արաքսի վրայ, իսկ Կարսում տաճկաց կորպուսը պատրաստում էր լարձակում սկսելու, Նոր նշանակած կառավարչապետմարքիզ Պաուլուչիին կանխեց տաճիկներին և լարձակեց Ախալքալակի վրայ Դառնաշուճ ձմրանը, տաճիկների համար անսպասելի կերպով, չանձնելով աչդ գործը Կոռլեարեակուն, Կոռլեարեակին առաւ բերդը

և ստացաւ գեներալ-մայորի աստիճան 29-րդ տարեկան հասակում։ Կողմնակիցին ապա հռչակեց Ասլանդուզի և Լենքորանի լաշթու-թիւններով։ Գունդը ապա գործի էր շրջուում միայն կարեւոր շէպ-քերում, իսկ գնդի հադ-հադ մասերը դործեցին Դաշստանում, Սև ծովի ափերին, Չեչենիստանում, բայց գունդը նշանակուում է գլխաւորապէս Պարսկաստանի շէմ Պասկելիյի ժամանակ, ապա արեւելեան պատերազմի մէջ 1853-36 — տաճիկները շէմ, ուր գունդը փառաւորեց Բաշ-Քեշիկլարի և Քիւրիւկ-Կարալի անուններով։ Նոյն ոգով նա գործեց նաև 1877-78-ի պատերազմում, փոքր-Ասիայում, և վերջը Ախալ-Թեքիի արշաւանքի մէջ։ 1864-72-ի թակահաններին գնդի չէֆն էր Կովկասի ներկայիս կառավարչապետը, ալի ժամանակ Ֆլի-գէլ-աշիւփանոյ իշխ. Սերգ. Կալիցինը, որին լաշթորդեց գնդապետ Ռեձնսկիւ, իշխ. Կալիցինը անցեալ 1899 թ-ին ներկեց գնդին 55 հազար ռուբլի, որի տոկոսները պիտի ծառայեն զրեթէ ամբողջապէս գնդի ծառայողաց հրեխաների կրթութեան։ Գունդը 15-ից մարտի 1891 թ. կոչուում է 14-րդ զրեմաշէրեան դրուզլենեան գեներալ Կողմնակիցի գունդ։

ԼԱՅՊՅԻԳԻ ՀԱՅ ՌԻՍԱՆ. ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ. Գոնեց իր գոյութեան 15 ամեակը, ընդունով պատաւոր անդամներ պար. Կար. Եղիանին, Ալ. Մանթաշեանին և Առ. Մատուրեանին, որոնք օգտակար ծառայութիւններ են արել ընկերութեան ալ և ալ ժամանակներ։

ԺԸՆԵԻՐ ՌԻՍԱՆՈՂԱՎԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ. Մենք ստացել ենք հետեւեալը փապգրեւ համար.

«Ժննեի հայ ուսանողութիւնը հիմնել է մի ընկերութիւն, որի նպատակն է՝ բարոյական կապ հաստատել հայ ուսանողներին մէջ, միջոց դալ նրանց ծանօթանալու հայոց կեանքին, նպաստել նրանց ինքնազարգացմանը և հիւթապէս օգնել չքաւոր ուսանողներին, որոնց թիւը շփոթալիցաբար չադ-մեծ է արդի հայ ուսանողական աշխարհում։ Այս նպատակի համար ընկերութիւնը պահում է գրադարան-ընթերցարան և փոխադարձ օգնութեան դրամարկ, որոնց գոյութիւնը կախած է ուսանողների սուղ միջոցներից։ Անդամավճար-ներից դուրսից գումարը ալեքան աննշան է, որ տալ միանգամայն համակրելի ձեռնարկութիւնը չէ կարող երկար գոյութիւն ունենալ, եթէ կոլմնակի օգնութիւն չհասցնեն։

«Ընկերութիւնը խնդրում է ձեռնահաս անձանց՝ հեղինակներ-րին, հարուստներին, օգնել նրան, թէ դրամով և թէ գրքերով։
Հասցէն՝ Genève (Suisse), Université Uzbachian.
Ժընէւ. 1900 թ. 8 լունիսի։

ՄԻ ԲԱՌԱՆԻՒՆԻ ԱՌԻՔՈՎ, ՎԼՆԵՊԿԻ ՄԽԻԹ. Զ. Արսէն Ղազիկեան թարգմանել է ֆր. Կոպպէի հակումը և Դարբինների գործադուլը, Կ. Պոլսի Սուրհանդակ՝ում խնդր քննադատութեան են ենթարկած եղել ալէթարգմանութիւնները, որ մենք չենք կարդացած, Հալը Ղազիկեանը Բաղմապէսում (№ 5) ընդարձակ բացատրութիւններ է տալիս իր գործածած բառերի և անունների համար, Կարդալով ալէթ պատասխանը, ուր Զ. Ղազիկեանը մեծ մասամբ բաւարար բացատրութիւններ է տալիս խնդրական բառերի և անունների համար, հարկ ենք գործում, ահա աւանդներ, կռիւ և պատերազմ բառերի մասին մեր նկատողութիւնն անել, որովհետեւ շատ արդէն շատ սովորական ու լատին կրկնող բառեր են, որպէս զի նոցա իմաստի մասին անվանալին էր վիճել. և ուր կ'երթալինք, եթէ ընթացիկ գրականութեան մէջ հաստատուած խօսքերը մենք և շուք տարբեր իմաստով գործածելը թողարկելի համարէինք: Իր հակաճառողին Զ. Ղազիկեանը պատասխանում է թէ la guerre (—ռուսերէն՝ война, գերմ. Krieg) հայերէն կռիւ, իսկ combat—պատերազմ ասել է: Եւ Զ. Ղազիկեանը ապացոյց է բերում Զ. Արսէն Բագրատունուն (18-րդ դար), որը իր գրաբար կ'ասիկ թարգմանութիւնների մէջ նոյն բառերը ալէթ իմաստներով է գործածել: Ի նպաստ Զ. Ղազիկեանի մենք կարող ենք մի աւելի ևս մեծ հեղինակութիւն չիչել կռիւ բառի համար, ահա է—հալ ժողովուրդը, որը la guerre կռիւ է ասում և ոչ պատերազմ, և որ ահա բառը նոյն իսկ չկալ էլ ժողովրդական բարբառների մէջ, (կռիւ եղաւ, կռիւ գնաց, ալսինքն՝ à la guerre), եւ, սակայն, Զ. Ղազիկեանին ահա կէտում հաւանութիւն տալ չենք կարող: Որ սովորեալով բառը մեր նոր հայերէնի մէջ պիտի գոյութիւն ունենալ—ալէթ մասին ոչ ոք չի տարակուսում, որովհետեւ չի կարելի ահա կէտում ժողովրդին հետեւել, որը կռիւ է ասում թէ կռիւ անբաշխ տեսութեանը (la guerre) և թէ հադ-հադ ընդհարումներին (combat). Ուրեմն մնում է միայն իմանալ թէ պատերազմ բառը կռիւ ամբողջ տեսութեանը ասել, թէ հադ-հադ ընդհարումներին: Բագրատունին և նորան հետեւողները վերջիններիս համար է պատերազմ ասում: Բայց, նորա հակառակ, թէ արեւոտեան և թէ արեւելեան հայութիւնը պատերազմ բառը վերապահեց la guerre-ին (=Krieg, война), և որովհետեւ նոր հայութեան ալէթան միահամուռ հաւանութիւնը աւելի արժէ քան Բագրատունիին—ուստի աւելորդ է ալէթ ալէթան ընդհանրացած մի բառի իմաստը փոխել ի հաճոյս Բագրատունու (եւ ոչ իսկ Բաղմապէս՝ը հետեւող եղաւ Բագրատունու. տես ալէթ ամսագրի քաղաքական բաժինը):

ՄԻՅԱՆԱԿ Ա. ՊՈՂՈՍԵԱՆ. Մենք սրացել ենք Թ. Զ. հր. ընկերութեան վարչութիւնից հետեւալ ծանուցումը.

Թիֆլիսի հայոց հրադարակապան ընկերութեան վարչութիւնը պատիւ ունի լալորնել հետեւեալը. Ա. Պօլոսեան ճիւղի է ընկերութեան անձեռնմխելի 5000 ռուբլի գումար, որի տոկոսով (մօտ 500 ռ.) երկու տարին մի անգամ պէտք է քրտի մրցանակ հայոցնոր (17-երորդ դարուց սկսած) գրականութեան եւ պատմութեան վերաբերեալ լաւագոյն աշխատութիւնների համար: Մրցանակին մասնակցել ցանկացողները պէտք է ներկայացնեն իրենց աշխատութիւնները մինչև 1901 թականի լուեարի 1-ը: Աշխատութիւնները ներկայացում են առանց հեղինակների անունների, լաւ անունները ներկայացում են առանձին ծրարներով, որոնց վրայ դրում է ճոյն նշանաբանը ինչ որ աշխատութեան վրայ: Մրցանակի արժանացած ձեռագրի հրադարակութիւնը կատարում է ընկերութեան հաւով: Մրցանակաբաշխութեան իրաւունքը պատկանում է ընկերութեան խմբագրական մասնաժողովին, որը իր կողմից ձեռագրի քննութիւնը կարող է լանձնել եւ կողմնակի ձեռնաս անձանց: Ծրարները եւ աշխատութիւններն ուղարկելու են ընկերութեան գրասենեակի հասցէով եւ նրանց վրայ պէտք է նշանակած լինի «Ա. Պօլոսեանի մրցանակի համար»:

Ընկերութեան գրասենեակի հասցէն.—Тифлисское Общество Издаііа Армянскихъ книгъ

Այս մրցանակի խնդրի մասին ընթերցողներին լալորնի է մեր կարծիքը (տես Մուրճ 1899 № 4-5 էջ 555-6):

ՏԱՃԿԻԼ-ՀԱՅԵՐ, Գերմանիայի, Անգլիայի եւ Աւստրո-Ունգարիայի Կ. Պոլսի շեսպանաւորների զինւորական կցորդները, սուլթանի համաձայնութեամբ, մի շրջագալութիւն են կատարում Մակեդոնիա, Ալբանիա եւ Հալաստան: Նպատակն է՝ օգնել թիւրքիալին ալդ իտանգներում ռեֆորմներ մտցնելու: Ալդ գործի ձեռներէցութիւնը պատկանում է Գերմանիալին: Որպէս զի Ռուսիայի կաակածը չը լարուցանեն իրենց դէմ, Հալաստան գնացող աւստրո-ունգարական կցորդն է (բարոն Հիսլ) եւ ոչ անգլիականը, իսկ Ալբանիա եւ Մակեդոնիա շրջագալում են անգլիական եւ գերմանական կցորդները միասին:—

—Մալիսի 14 (27) հեռագիրը հաղորդեց թէ «Մինիստրների արտակարգ խորհրդի մէջ, որ կալացաւ իլլիրի-լիսկում, քննեց ալն իրադէլի ի կատար ածելու մասին, որով սուլթանը համաձայնութիւն էր լալորնել հայոց պատրիարքի պահանջներին»: Յալորնեց որ ալդ պահանջներից մէկը եղած է հալերի զինւորական տուրքի վճարումը լեւրածգելը:

ՆԱԽԱՅԻՆ ՄԵՍ ԳԺԲԱՅՈՒԹԻՒՆ, Նեու-իորկի գերմանական Լորդ Ընկերութեան նաամադուցի մէջ գերմանական մի քանի նաւեր ալուսեցան, և հրդեհի զոհ եղան շուրջ 200 հոգի:

Յ Բ Ա Ն Ս Ի Ա

—Իրէֆուսեան գործ, Ռէչնալս մի ճառի մէջ չափոնեց թէ Իրէֆուսեան գործը նորից վերաքննելու է, Ալէք ճառը լուզում առաջացրեց և պատգամաւորներ ժողովում հարցապնդում եղաւ Պատ. մինիստր Գալիֆէ՝ չափոնեց որ ճիշդ է թէ տեղեկատու բիւրօից թղթեր է գողացել մի սպայ, որը՝ մինիստրի հարցին՝ պատասխանել է թէ ճիշդ է որ ալէք թղթերը իւրքն է վերցրել և որ շորանով նա քաշաքական գործ է կատարել: Գալիֆէն իսկոյն արձակեց սպային ծառայութիւնից, էմիլ Զոլան լորդորում է մինիստրութեանը՝ առաջ փանել գործը առանց բան ծածկելու:

—Գևն. Գալիֆէ, պատերազմական մինիստրը Վալէէկ-Ռուսօի մինիստրութեան մէջ, հրաժարական տւեց տկարութեան պատճառով. նորա տեղը նշանակեց գեն. Անդրէ. Ալէք հրաժարական կապուենի Իրէֆուսի գործի վերաբման հետ:

—Գլխաւոր շտաբի պետ Դըլոնէ հրաժարական տւեց պաշտօնից, գլխաւոր շտաբի մէջ կատարած փոփոխութիւնների պատճառով և մնաց պաշտօնում միայն անսալով պատերազմ մինիստրի հրամանին:

—Հրաժարական տւեց նաև Ֆրանսիական զօրքերի գեներալիսիմուս գեն. Ժամոնը՝ որի տեղ նշանակեց գեն. Բրիւսէր—որը վալելում է կառավարութեան վստահութիւնը իրո հանրապետական:

Ժամոնի հրաժարականի առիթով պատգ. ժողովի մէջ հարցապնդում եղաւ և կառավարութիւնը վստահութեան քէ ստացաւ:

—Պատերազմական նաւային օրինագիծը ընդունեց պատգամաւորների ժողովում. ծրագրի իրագործումը պիտի աւարտի 1908 թ-ին:

ԱՆԳԼԻԱ. Համալսքերի ժողովը ընդունեց կառավարութեան առաջարկած օրինագիծը կամաւորների մասին: Մինչև այժմ, ըստ օրինի՝ կառավարութիւնը կանչում էր կամաւորներին յրօշակի դակ երբ թշնամին ներս է խուժում քրիտանական հողը, այժմ կամաւորները կարող են կանչել նաև միջազգային լարած չարաբերութիւնների ժամանակ, երբ սպասուում է թէ թշնամին ներս կ'խուժի. նաև այժմ իրաւունք է տրւում կամաւորներին պաշմաններ կապելու զինուորական ծառայութիւն կատարելու համար թագաւորութեան սահմաններում կամ սոցանից շուրս: Ներկայ օրինագծով, եթէ պատահի մի լէպք, երբ ցանկալի լինի զաշտնի կերպով կամաւոր զօրքեր յրկել պատերազմի դաշտը, ալէք կարելի կ'լինի՝ առանց բոլոր կամաւորներին հրաւիրելու:

ԻՏԱԼԻԱ. Ամբոշ Իդալիալում կատարեցին պարամենտական ընդուն-
թիւններ. Հոռմում վերընդունեցին մինիստրութեան կողմնակիցներից
երեքը և հանրապետականներից երկուսը: Պալեմենտում վերընդունեց
կրիսպին:

Կառավարական կուսակցութիւնը ուժեղացաւ. ճորանից ընդըր-
ւած են 299 պարգամաւոր, որոնց վրայ կարելի է աւելացնել 10
անկախները: 105-ը պարկանում են սահմանադրական ընդդիմադիր
կառավարութեան, այն է՝ Յանարդելի, Կրիսպին, Գիոլիտտի և
Ռուդինիի խմբերին: 94-ը պարկանում են ծալրի ձախակողմին, այն
է 32 սոցիալիստ, 29 հանրապետական և 33 արմատական. ծալրի
ձախակողմը առաջ 62 հոգուցր, էպիմո՝ 94:

† ՏԻԿԻՆ ԳԼԱՒՍՏՈՆ. Հռչակաւոր Գլաշտորնի ամուսինը. վախճարուեց
լինին - ինչու օրինակելի ամուսին, ամբողջապէս Նւիրաւ
իր մեծ ամուսնուն և ընդանիքին:

† ՄՈՒՐԱԼԻՈՎ, Կոմս Միխայիլ Նիկ., ռուսաց արքային գործերի մինիստր,
վախճան 8 լուսինի:

† ՏԵՐ-ՍՏԵՓԱՆԵԱՆ, Գաբրիէլ, Թիֆլիսի փաստաբան, վախճ. լուսինի 18
ինչ, Հանգուցեալի փաստաբանական համբաւը փոխարինեց այն որ
թողել էր ռուս փաստաբան Ստեփանով (Տիմաշիլը Նովոե Աբազ-
րենին լրագրի, † 1887-ին). Հանգուցեալը Գորի քաղաքից էր:
Թաղմանը Ներկայ էր մեծ բազմութիւն:

ՆՈՐ ՍՏԱՅԻԱԾ ԳՐԳԵՐ

(Ուր ծաւկան չկայ—ներկայ տարւանն է)

- 1) ԶԵՅԹՈՒՆՅԻ.—Չէլթոնի անցեալէն ու ներկայէն. Ա. մասն.—Վինն-
նա, Միսիթ. տպ., 1 ռ. 50 կոպ. = 3 ֆրանկ 75 սանտ:
- 2) ՈՒԱՅՏ.—Խշոճ գաղափարան. Թարգմ. ռուսերէնից. Թ. Հ. Հր. ընկ.
(Ա. Պոլոսեանի գումարով). Թիֆլ. տպ. Վրաց Հր. ընկ., 5 կոպէկ:
- 3) ԲՈՒԳՈՒՂԵԱՆ, Ա. բժ. —Վենետիկան արտեր. Թիֆլ. տպ. Կ. Մար-
տիրոսեանցի, 5 կոպէկ:
- 4) ՄԱԼԽԱՍԵԱՆՑ, Ստ.—Համառօտ պարմութիւն Ներսիսեան հոգևոր
Դպրոցի 75-ամեայ գոյութեան (1824—1899). Հրատ. Ներսիսեան
Դպրոցի. Թիֆլ., տպ. Կ. Մարտիր., գինը ձրի:
- 5) ԱՐԾՐՈՒՆԻ, Վ. բժշկ.—I. Սիֆիլիս (Թարգմ.), II. Կակուշ շանկր
(Տեղիւնակութիւն). III. Սուսունակ (Տեղիւնակութիւն). Հրատ. Թ. Հ.
Հր. ընկ.—Թիֆլ. տպ. Մն. Մարտիրոսեանցի, 25 կոպէկ:
- 6) ԶԻԻԱՆՈՒ ԲՆԱՐԸ.—Հատոր Ա.—ժամանակակից կեանքը. Թիֆլ. տպ.
Կ. Մարտիրոսեանցի, 50 կոպէկ:

- 7) ԱՐԾՐՈՒՆԻ, Վ. ԲԺ.—Յշտաների բարեկամ բժիշկ Հասգ, Փոխադր. ռուսերէնից, Հր. Թ. Հ. Հր. Ընկ.—Թիֆլ., տպ. Ռոսին., 20 կողէկ:
- 8) ԲԵՉՕՐԲԱՉՈՎ, Պ.—Կանանց ներկայ գրութեան մասին (հրապ. Դաստիարակութիւն), թարգ. Ս. Կասեան, Բաքու, տպ. Գիւլախարեան 15 կողպ.
- 9) ՀԵՆՆԻՆԱԿ?—Աշակերտի առողջապահութիւն. թարգմ. Տէկ. Մարիամ: Հրատ. ԲԺ. Ա. Բուդաշեանի, Նոր-Նախիջկան, տպ. Եղբ. Աւագեան-նէրի, 2 կողպէկ:
- 10) ԹՈՒՄԱՆԵԱՆՑ, Յարութիւն.— Մելիք-Իսուֆ. պարսկական պոէմա (1728—1750), Արդապապ. Լուսա հանդիսից, Թիֆլ., տպ. Շարաձէ, 20 կողպէկ:
- 11) ՎԱԿՆԵՐ.—Առակներ բնական պարմութիւնից. թարգմ. ռուսերէնից (Հր. Կնէր մանուկներին), Թիֆլ., տպ. Կ. Մարտիր., 12 կողպէկ:
- 12) ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ. ամսաթերթ կրօնական և աստուածաբանական, Հրատ. և խմբագիր հայր Պարոնեան, Մանչէսթըր, Նոր ՂԵՐ-ջան, Բաժանորդագիրն 4 շիւկնգ=5 ֆրանկ:

ՄՈՒՐՃԻ ՊՈՍՏԱՐԿԻ, Ուստի, Ամերիկա, Հայոց զրադարանի ընկերութեան (Armenien Library).—Պուր գրում էք լուսին 3-ից. ս. բանից աւելի քան չորսամիսներ առաջ պ. Աշխատանքի Բալանթարի միջոցաւ ձեզի շրկեցինք Մուրճի ներկայ (1900) տարուի բաժնեկիւնը, ուցաւում ենք որ մինչ ցարդ չտաքանք ոչ միայն Մուրճ թերթը այլ նոյն իսկ լուր մը... Առ ալդ չադրում ենք որ Մուրճի բաժնեկիւնը ձեր ակնարկած խմբագրութիւնից չենք ստացած և ոչ ալդ մասին որ և է տեղեկութիւն ունէինք մինչև ձեր նամակն ստանալու օրը, Թոշնելով ձեր գրածի պարասխանադրութիւնը ձեզ վրա՝ շրկում ենք Մուրճի Ռե-նէրը լուսար ամսից, և առաջարկում ենք ձեր բաժնեկիւնը ուղարկի մեզ շրկել, իսկ Մշակի խմբագրութեան հետ ձեր հաշիւը կարգադրեցէք ինչպէս կ'կամենաք: